ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՄՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ (1915-1917թթ.)

ՏԻԳՐԱՆ ՁԱՔԱՐՅԱՆ

Հայոց ցեղասպանության նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումն ու քաղաքականությունը հասկանալու համար կարևոր դեր ունի 1915-1916թթ. ամերիկյան մամուլի ուսումնասիրումը: ԱՄՆ-ի մամուլում տեղ գտած հոդվածների, նորությունների, հաղորդագրությունների համադրումը հայտնի փաստերի, վավերագրերի և հրապարակումների հետ ստեղծում է տեղի ունեցածի ավելի մանրամասն և հանգամանալից պատկեր:

ԱՄՆ-ի մամուլը, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների բերումով, թերևս Արևմուտքում ամենաշատն էր ներկայացնում լրատվություն Հայոց ցեղասպանության մասին: Դրա հիմնական պատճառն այն էր, որ ԱՄՆ-ն մինչև 1917-ը չեզոքություն էր պահպանում Առաջին աշխարհամարտում և Օսմանյան Թուրքիայի տարբեր մասերում ուներ բազմաթիվ դիվանագիտական ներկայացուցիչներ, միսիոներներ, թղթակիցներ և այլն: Ամերիկյան առաջատար «Նյու-Յորք Թայմս» լրագիրը Հայոց ցեղասպանությանն առնչվող տեղեկատվությունը ստանում էր Թուրքիայից (Կ. Պոլիս, Զմյուռնիա), Գերմանիայից, Ռուսաստանից, Հունաստանից, Լոնդոնից, Փարիզից, Հռոմից: Միաժամանակ ամերիկյան մամուլ էին թափանցում Թուրքիայի տարբեր մասերում գտնվող հյուպատոսների, Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի զեկուցագրերից հատվածներ, ամերիկյան միսիոներների՝ օտարերկրյա միսիաների լիազորների ամերիկյան խորհրդին (ՕՄԼԱԽ) հասցեագրված թղթակցությունները, ինչպես նաև այլ թղթակցություններ:

Թուրքիան իրեն իրավունք էր վերապահում գրաքննել ԱՄՆ-ի հյուպատոսների թղթակցությունները. դրանք հաճախ տեղ չէին հասնում, կամ տեղ էին հասնում զգալի ուշացումով կամ էլ՝ զարտուղի ճանապարհներով:

ԱՄՆ-ի մամուլի նյութերը կարևոր են ևս մի առումով: Ի տարբերություն Անտանտի երկրների մամուլի, որի համար բնական կլիներ հակաթուրքական քարոզչությունը, ԱՄՆ-ի մամուլը՝ իբրև չեզոք երկրի մամուլ, շահագրգռված չէր հակաթուրքական քարոզչություն բորբոքելու մեջ և այդքանով իսկ առավել մեծ վավերական արժեք ուներ:

Խնդրո առնչությամբ՝ ամերիկյան մամուլի մինչ այժմ կատարված ամենալուրջ ուսումնասիրությունը Ռ. Քլո-

յանի «Հայոց ցեղասպանությունը. ԱՄՆ-ի մամուլի հրապարակումներ (1915-1922)» նյութերի ժողովածուն է,[1] ուր հատկապես լավ է ներկայացված հեղինակավոր «Նյու-Յորք Թայմս» լրագիրը: Այսուհանդերձ հարկ է նշել, որ ուսումնասիրությունում արտացոլում չեն գտել շատ այլ փաստեր, մասնավորապես՝ պաշտոնական Վաշինգտոն-ամերիկյան մամուլ հարաբերությունները, ինչպես նաև ամերիկյան կառավարության ազդեցությունը մամուլի վրա:

Ներկա ուսումնասիրությունը նպատակ ունի ինչ-որ չափով լույս սփռել այդ հարցերի վրա, ինչպես նաև ներկայացնել ԱՄՆ-ի մամուլը ամերիկյան պաշտոնական քաղաքականության ֆոնի վրա: Այս նպատակով ամերիկյան մամուլը պայմանականորեն բաժանել ենք երկու խմբի՝ հրատապ մամուլ (ներկայացված «Նյու-Յորք Թայմս» լրագրով) և վերլուծական-հրապարակախոսական մամուլ: Վերջին խմբում են ընդգրկված մի շարք այլ ամերիկյան լրատվամիջոցներ:

«Նյու-Յորք Թայմս»-ում հիմնականում տեղ են գտել լրատվական հաղորդագրություններ, ինչպես նաև խմբագրությանն ուղղված նամակների տեսքով արձագանքներ և վերլուծություններ: Թերթը, հավատարիմ մնալով անկողմնակալ լրատվություն հաղորդելու իր կոչմանը, մեծ մասսամբ չի մեկնաբանել մատուցված լրատվությունը:

Բավական հետաքրքրական է «Նյու-Յորք Թայմս»-ի հաղորդագրությունների ժամանակագրական վերլուծությունը, որը տալիս է հետևյալ պատկերը: 1914թ. նոյեմբերից արդեն թերթում հայտնվեցին հաղորդագրություններ Օսմանյան կայսրությունում և մասնավորապես՝ Էրզրումում, հայերի նկատմամբ կատարվող բռնությունների մասին:[2] 1915թ. հունվարին կային հաղորդագրություններ Թալեաթի հայտարարությունից մեջբերված «Թուրքիան՝ միայն թուրքերի համար» վերտառությամբ:[3] 1915-ի մարտին և ապրիլին թերթում արձագանքներ եղան Ալաշկերտի հովտում, պարսկական Աղբեջանում և Վանի շրջակա գյուղերում թուրքերի և քրդերի կողմից կատարված գազանությունների մասին: Նույն ժամանակահատվածում թերթը, համարյա առանց մեկնաբանությունների, տպագրեց Թալեաթի և Էնվերի հարցազրույցները, որոնք երկուսն էլ, կենտրոնանալով հիմնականում Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելու հանգամանքի վրա, այն միտքն էին արտահայտում, որ Թուրքիան հարկադրված էր պատերազմել, և որ հայ ժողովրդի գլխին այդքան աղետներ բերած «արբազան պատերազմը» լիովին արդարացված քայլ էր:[4]

Ապրիլի 24-ի լույս 25-ին Կ. Պոլսում հայ մտավորականության ձերբակալությունները «Նյու-Յորք Թայմս»-ում բոլորովին արձագանք չստացան: Թերևս դա կարելի է բացատրել այդ փաստի հնարավոր հետևանքները չհասկանալու հանգամանքով: Մյուս կողմից ԱՄՆ-ի պետքարտուղարությունը, որը նույնպես մամուլին որոշակի տեղեկատվություն էր ներկայացնում, այս անգամ անհրաժեշտ չէր համարել հաղորդում ներկայացնել իրադրության մասին: Իսկ այն, որ պետքարտուղարությունը փաստի մասին տեղեկացված էր, երևում է ապրիլի 28-ին Վաշինգտոնում ստացված Հ. Մորգենթաուի հեռագրից, որում ասվում է. «100-ից ավել ականավոր հայեր ձերբակալվել են հեղափոխական շարժումներին մասնակցելու շինծու պատրվակով»:[5]

Ընդհանուր առմամբ ամերիկյան մամուլը, ընդհուպ մինչև 1915-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները, բավական թույլ էր արձագանքում հայերի

ցեղասպանությանը: Դրա պատճառներից ամենակարևորը, թերևս, պետք է համարել տեղեկատվության ուշ հասնելը, ինչի պատճառներն արդեն նշվել են:

1915թ. մայիս ամսվա ընթացքում «Նյու-Յորք Թայմս»-ը ներկայացրեց մի քանի հաղորդագրություններ Վանի շրջանում շարունակվող կոտորածների, Վանի ինքնապաշտպանության, Կիլիկիայում տեղահանումների և դրա դեմ կիլիկիահայերի դիմադրության մասին: Մայիսի 23-ին թերթը տպագրեց Անտանտի երկրների միացյալ հայտարարությունը, որում նշվում էր, որ կազմակերպված կոտորածների համար մեղավոր էին ճանաչվում անձամբ օսմանյան մինիստրների կաբինետի անդամները:[6] Հունիս և հուլիս ամիսներին ամբողջ թափով ընթացող տեղահանությունների մի փոքր մասը միայն արձագանք գտավ այդ ամիսների ամերիկյան մամուլում: Օգոստոսի 4-ի «Նյու-Յորք Թայմս»-ի համարում տեղեկատվություն տպագրվեց ամիսներ առաջ Կիլիկիայում, Բիթլիսի շրջանում և Թուրքիայի այլ մասերում կատարված եղեռնագործությունների, ինչպես նաև Կ. Պոլսում քսան հնչակյան գործիչներին կախաղան բարձրացնելու մասին:[7]

Պետք է նկատի ունենալ, որ այդ լրատվության զգալի մասը քաղված էր պետքարտուղարության աղբյուրներից, քանի որ Թուրքիայի այդ մասերում չկային ամերիկյան լրագրողներ, ասել է թե՝ պաշտոնական Վաշինգտոնն էր որոշում՝ հրապարակել որևէ փաստ թե՞ ոչ: Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումն ընդգծված ձևով չեզոք էր, և դա ուներ իր հիմնավորված պատճառները: Հայտնի է, որ Անտանտի երկրները պատերազմում էին Թուրքիայի դեմ, և մեծ տերություններից միայն Գերմանիան էր մնում Օսմանյան կայսրությունում ազդեցություն ունեցող տերություն. այդ ազդեցությունը գնալով աճում էր և սպառնում վերածել Թուրքիան գերմանական գաղութի: Նման պայմաններում մեծանում էր ԱՄՆ-ի՝ իբրև գերմանական հեգեմոնիայի դեմ հակակշռի դերը և ԱՄՆ-ի շահագրգռությունը՝ իր «չեզոքությամբ» ամրապնդել դիրքերը Թուրքիայում: Սակայն, այսուհանդերձ, հայերի ցեղասպանության ծավալների մեծացմանը զուգընթաց, ամերիկյան հասարակական կարծիքի, ինչպես նաև Անտանտի երկրների, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի ճնշման տակ ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշումը որոշակիորեն թեքվեց դեպի կոտորածների դատապարտումը:

Ինչպես հայտնի է 1915թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հայերի ցեղասպանությունը մի նոր փուլ թևակոխեց: Պետքարտուղարությունը բավական լավատեղյակ էր տեղի ունեցող իրադարձություններին, որի մասին են վկայում Հ. Մորգենթաուի բազմաթիվ զեկուցագրերը: Այսպես, 1915թ. հուլիսի 10-ի իր զեկուցագրում Հ. Մորգենթաուն նշում է՝ «տեղի ունեցողը խաղաղ բնակչությանն արմատախիլ անելու փորձ է: ... [սրանք] ժողովրդի կամ ֆանատիկոսների պահանջով իրականացված գործողություններ չեն, այլ ամբողջովին կանխամտածված են և ուղղորդվում են Կ. Պոլսից՝ ռազմական անհրաժեշտության անվան տակ»:[8] Ի պատասխան՝ պետքարտուղար Ռ. Լանսինգը հուլիսի 16-ին ծանուցում է Մորգենթաուին. «Պետքարտուղարությունը հավանություն է տալիս Ձեր գործելակերպին», բայց միաժամանակ նշում է, որ «չի կարող տալ լրացուցիչ ցուցումներ այս դժվարագույն իրադրության վերաբերյալ»:[9] Դիվանագիտական լեզվով սա նշանակում էր, որ Վաշինգտոնը մտադիր չէր պաշտոնական բողոք հայտնել թուրքական կառավարությանը: Միաժամանակ հուլիսի 14-ին Լանսինգին նամակ էր հղել ՕՄԼԱԽ-ի նախագահ Ջ. Բարտոնը, որում խնդրվում

էր «ինչ-որ բան անել սարսափները թեթևացնելու համար»:[10] Հուլիսի 19-ի իր պատասխան նամակում Լանսինգը, մասնավորապես, նշում էր. «Անհրաժեշտ է ավելացնել, այնուամենայնիվ, որ հայերին օգնելը գնալով ավելի է դժվարանում, քանի որ հայերի հոծ զանգվածներ թուրքական կառավարության դեմ ձեռնված ապստամբության մեջ են, և թուրքական կառավարությունը հայտարարում է, որ այն միջոցները, որ ինքը ձեռք է առել, այնպիսին են, ինչպիսիք անհրաժեշտ են այդ ազգից իր պաշտպանության համար»:[11]

Այնուամենայնիվ, բազմաթիվ հանգամանքներ նպաստում էին, որ ԱՄՆ-ի մամուլը ավելի մեծ տեղ հատկացնի հայերի ցեղասպանության լուսաբանմանը: 1915թ. սեպտեմբերի կեսերից ամերիկյան մամուլը սկսեց ավելի ու ավելի մեծ ուշադրություն սևեռել այս խնդրին: Այդ ժամանակահատվածում «Նյու-Յորք Թայմս»-ը բավական լրջորեն անդրադառնում էր Հ. Մորգենթաուի՝ 550 000 հայերի Թուրքիայից ԱՄՆ-ն տեղափոխելու ծրագրին, որը, ինչպես հայտնի է, չիրականացավ:[12] ԱՄՆ-ի պետքարտուղարությունն ամեն կերպ խուսափում էր պաշտոնապես մասնակցել հայանպաստ կամ որևէ կերպ թուրքական իշխանությունների համար անընդունելի գործողություններին: Այսպես, «Նյու-Յորք Թայմս»-ի սեպտեմբերի 25-ի համարում նշվում էր, որ ՕՄԼԱԽ-ը պատրաստվում է հրապարակել Թուրքիայի հայերին դրամական օժանդակություն ցույց տալու մի կոչ՝ հիմնված Հ. Մորգենթաուի մի զեկուցագրի վրա: Սակայն պետքարտուղարությունը հրաժարվում էր հայտարարության կազմմանը որևէ պաշտոնական մասնակցություն բերել, վկայակոչելով Թուրքիայի հակազդեցությունն «իր ներքին գործերին միջամտելու» ցանկացած փորձին:[13]

1915թ. սեպտեմբերի կեսերին ԱՄՆ-ում ստեղծվեց Հայկական կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեն (Armenian Atrocities Committee), որը կես ամսվա ընթացքում հավաքեց և խմբագրեց հայերի ցեղասպանության վերաբերյալ ամերիկյան դիվանագետների բազմաթիվ վկայություններ, որոնք հոկտեմբերի 4-ին հատուկ հրապարակման տեսքով հանձնվեցին մամուլին: Կոմիտեի նախագահ, ՕՄԼԱԽ-ի նախագահ Ջ. Բարտոնը 1915թ. հունիսից պետքարտուղարությունից իրավունք էր ստացել սահմանափակ չափով օգտվել նրա արխիվներից: Հոկտեմբերին, արդեն, Բարտոնին ընձեռած իրավունքների շրջանակը զգալիորեն ընդլայնվեց, ինչի շնորհիվ կոմիտեն կարողացավ հրապարակել վերոհիշյալ փաստաթղթերից կազմված, մամուլի համար նախատեսված հաղորդագրությունը:[14] Այդ հաղորդագրությունում որևէ աղբյուր չէր նշվում, մի կողմից դրանց հեղինակների անվտանգության նկատառումով, իսկ մյուս կողմից՝ այն պատճառով, որ ԱՄՆ-ի կառավարությունը, ինչպես վերը նշվեց, խուսափում էր այդ հրապարակումներում արտահայտել Թուրքիայի համար անընդունելի պաշտոնական դիրքորոշում:

Հոկտեմբերի սկզբներից ամերիկյան մամուլը հեղեղվեց հայերի ցեղասպանության մասին լրատվությամբ, ինչպես նաև այդ փաստերի մեկնաբանություններով ու դրանց նկատմամբ դիրքորոշում արտահայտող հոդվածներով: Ռ. Ջոյանի վերոհիշյալ աշխատությունում տեղ գտած՝ ԱՄՆ-ի մամուլի հոդվածների ընդհանուր քանակության մոտ 1/3-ը բաժին է ընկնում 1915թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ժամանակահատվածին:[15] ԱՄՆ-ի մամուլում հայերի ցեղասպանության նկատմամբ ուշադրության ընդհանուր աճին զուգընթաց, մեծացավ նաև թուրքական կողմի տեսակետները

արտահայտող հոդվածների քանակը: Սեպտեմբերի վերջերից ամերիկյան մամուլում իրար հետևից հայտնվեցին թուրքերի գործողությունները պաշտպանող հայտարարություններ, որոնց հեղինակներն էին ինչպես թուրք, այնպես էլ գերմանացի պաշտոնյաներ կամ առանձին անհատներ:

Սեպտեմբերի 28-ին «Նյու-Յորք Թայմս»-ում տպագրվեց ԱՄՆ-ում Գերմանիայի դեսպան Բեռնստորֆի նամակը Ամերիկահայերի ազգային պաշտպանության միության գործադիր խորհրդի նախագահ Միհրան Սնասլիին, որում ժխտվում էր տեղի ունեցած վայրագությունների փաստերը, կամ, առնվազն, դրանց մասշտաբները, իսկ հայերը մեղադրվում էին դրանք չափազանցնելու մեջ:[16] Թերթի հաջորդ՝ սեպտեմբերի 29-ի համարում, Հայկական կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեի քարտուղար Ս. Դաքթոնը բազմաթիվ փաստերով հերքեց գերմանական դեսպանի տեսակետը:[17] Նույն համարում միաժամանակ տպագրվեց նաև Բեռնստորֆի պատասխանը՝ մինչ այդ պետքարտուղարության՝ իրեն փոխանցած ոչ պաշտոնական խնդրանքի (դիմել գերմանական կառավարությանը, որպեսզի վերջինս ազդի թուրքական կառավարության վրա հայերի նկատմամբ հալածանքները մեղմելու համար) մասին: Բեռնստորֆի պատասխանում այն միտքն էր հայտնվում, որ թուրքերի այդ գործողությունները նպատակ են ունեցել կանխելու հայերի կողմից հնարավոր դիմադրությունը, ինչպես նաև այն, որ հայերը ապստամբել էին թուրքական օրինական կառավարության դեմ:[18]

Հոկտեմբերի 8-ին նույն Բեռնստորֆը, ի լրումն իր պատասխանի, պետքարտուղար Ռ. Լանսինգի «կոնֆիդենցիալ ուշադրությանը» ներկայացրեց 1915թ. օգոստոսի 9-ին Կ. Պոլսում օսմանյան կառավարության՝ գերմանական դեսպանի միջոցով ներկայացված Գերմանիայի կառավարության հուշագիրը, որում վերջինս մեղմ ձևով բողոքում էր «այդ սարսափելի արաքների» դեմ և «մերժարվում որևէ պատասխանատվությունից», որ կարող էր բխել դրանից:[19]

Հոկտեմբերի 9-ին, իսկ հաջորդ օրն ավելի մանրամասն՝ «Նյու-Յորք Թայմս»-ը ներկայացրեց գերմանական «Թագես ցայտունգ» թերթի ռազմական թղթակից կոմս Ռևենթլոուի հոդվածի բովանդակությունը, որն ամփոփվում էր հետևյալ դատողությամբ. ԱՄՆ-ը գնված է Անտանտի ոսկով և այդ պատճառով, ըստ նրա, օժանդակում է հայերին: Ռևենթլոուն նաև այն կարծիքն է հայտնում, որ «հայերին ճնշելը» Թուրքիայի ներքին գործն է: «Ոչ ոք իրավունք չունի Թուրքիայից պահանջելու, որ այն իր ծոցում սնի ներքին թշնամու»,- ամփոփում է իր միտքը գերմանացի զինվորական թղթակիցը:[20]

«Նյու-Յորք Թայմս»-ը հոկտեմբերի 13-ի իր մի թղթակցությունում մեջ՝ բերում էր գերամանական «Վոսիշե ցայտունգ» լրագրում տպագրված մի հոդված, որն այն տեսակետն էր հայտնում, որ Հայկական հարցը զուտ մարդասիրական բովանդակության անօգուտ վեճ է և որ այն Անտանտը օգտագործում է ԱՄՆ-ի հարաբերությունները Թուրքիայի և Գերմանիայի հետ սրելու նպատակով: Հոդվածում հերքվում էր 800000 հայերի ոչնչացման փաստը:[21]

Ոգևորվելով իրենց ավագ դաշնակցի աջակցությամբ՝ թուրքերը ծավալեցին մի իսկական քարոզարշավ, փորձելով ամեն կերպ արդարացնել իրենց գործողությունները, նույնիսկ հակամեղադրանքներ ուղղելով հայկական կողմին: Ի դեպ, քարոզարշավի այդ ձևերից շատերը բավական

ծանոթ կարող են թվալ մեր ժամանակակիցներին, և դա բնական է, քանի որ այդ նույն փաստարկներն օգտագործվում են մեր օրերում ևս՝ հայերի ցեղասպանությունը ժխտող «տեսակետներում»:

Այսպես՝ հոկտեմբերի 15-ին «Նյու-Յորք Թայմս»-ում տպագրվեց Նյու-Յորքում Թուրքիայի գլխավոր հյուպատոս Զելալ Մյունիֆ բեյի հայտարարությունը, որում թուրք պաշտոնյան իսպառ հերքում էր հայերի կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեի հրապարակած նյութերի վավերականությունը և մեղադրում էր հայերին՝ Վանում և այլուր օրինական իշխանությունների դեմ ապստամբություն բարձրացնելու մեջ:[22] Այս հայտարարության պատասխանը հրապարակվեց թերթի հոկտեմբերի 17-ի համարում: Պատասխան նամակում, որը ստորագրել էին Հայկական ընդհանուր առաջադիմական միության նախագահ Սմբատ Գաբրիելը և Ամերիկահայերի միության անդամ Արշակ Մահտեսյանը, ի հայտ էին բերվում Հայոց եղեռնը վկայող բազմաթիվ աղաղակող փաստեր, դատապարտվում էր թուրքական գլխավոր հյուպատոսի վարքագիծը, երբ վերջինս կատարված հանցագործությունները սքողելու նպատակով խեղաթյուրում էր փաստերը:[23] Սակայն դրանով չսահմանափակվեց թուրքական քարոզարշավը: «Նյու-Յորք Թայմս»-ի հոկտեմբերի 18-ի համարում տպագրվեց ոմն Զիա Մուֆթի-զադեի նամակը թերթի խմբագրին, որում հիմնականում կրկնվում էին արդեն վերը հիշատակված կեղծ փաստարկները: Նամակագիրը նշում էր, որ ինքը թեև դատապարտում է կանանց և երեխաների դեմ կատարված հանցանքները, «բայց չէ՞ որ պատերազմական պայմաններում նման դեպքեր եղել են նաև արևմտյան ռազմաճակատում, ուր բաղաքակիրթ ազգեր են պատերազմում»:[24]

Թուրք պաշտոնյաները փորձեցին նույնիսկ հայերի դեմ պաշտոնական հակամեղադրանքներ առաջ քաշել: Ինչպես հաղորդում է «Նյու-Յորք Թայմս»-ը 1915թ. հոկտեմբերի 22-ի իր համարում, Օսմանյան կայսրության գործերի հավատարմատար Աբդուլ Հաքքը Հուսեյն բեյը նախորդ օրը ԱՄՆ-ի պետքարտուղար Լանսինգին էր հանձնել Կ. Պոլսից ստացված կոմյունիկեն, որում շարադրված էին «հակամեղայլրանքներ հայերի և հույների կողմից խաղաղ թուրք բնակչության նկատմամբ գործադրված վայրագությունների մասին»: Ինչպես նշվում է հոդվածում, ԱՄՆ-ի պետքարտուղարը «ձեռնպահ մնաց որևէ մեկնաբանություններից, բացի այն, որ ինքը մինչ այդ պահը առիթ չի ունեցել ծանոթանալու փաստաթղթին»: «Չի կարելի ակնկալել, - եզրափակում է թերթը, - որ առայժմ պետքարտուղարությունը որևէ բան ձեռնարկի այդ հարցով»:[25]

Հոկտեմբերի 25-ին «Նյու-Յորք Թայմս»-ում ներկայացվեց օսմանյան խորհրդարանի նախագահ Խալիլ բեյի հետ գերմանական «Թագեբլատ» թերթի թղթակից Էմիլ Լուդվիգի հարցազրույցի համառոտագրությունը: Հարցազրույցում Խալիլ բեյը հայտարարում էր, որ հայերը դավաճանել էին Օսմանյան կայսրությանը, և իշխանությունները ստիպված էին նրանց հեռացնել պատերազմի թատերաբեմից: Ինչ վերաբերում է «ծայրահեղություններին», ինչպես արտահայտվում է Խալիլը՝ «դրանց համար կառավարությունը ցավում է, բայց միջոցներ չունի դրանք կանխելու»:[26]

Այս նույն ամիսներին «Նյու-Յորք Թայմս»-ը լի էր Հայոց ցեղասպանության սահմռկեցուցիչ մանրամասները նկարագրող լրատվությամբ: Թերթի սեպտեմբերի 30-ի համարում տեղեկացվում էր, որ օսմանյան խորհրդարանի անդամներ Զոհրապն ու Վարդգեսը սպանվել էին ավա-

զակների կողմից: Ըստ լրատվության, սպանվածների մեջ էին նաև դաշնակցական ականավոր գործիչ Ակնունին, Թուրքիայի գյուղատնտեսության նախկին նախարարներ Հալաջյանը և Բաստերմաջյանը: Լրատվությունում տեղ էր գտել նաև Թալեաթի խոսքերից մի մեջբերում. «այսուհետ տասնհինգ տարվա ընթացքում հայկական հարց այլևս չի լինի»:[27] Ի դեպ, այս խոսքերի իսկությունը կասկածի տակ է դնում պատմության ժամանակակից ամերիկյան կեղծարար Հիթ Լոուրին, որն այն համարում է Հ. Մորգենթաուի կողմից հետագա հավելում:[28]

Հոկտեմբերի 5-ին «Նյու-Յորք Թայմս»-ը հրապարակեց պետքարտուղար Ռ. Լանսինգի հեռագիրը, որով Հ. Մորգենթաուին ցուցում էր տրվում հաղորդել օսմանյան կառավարությանը, որ տեղի ունեցող վայրագությունները ԱՄՆ-ում առաջացնում են հակաթուրքական տրամադրություններ:[29] Ողջ հոկտեմբեր ամսվա ընթացքում և դրանից հետո «Նյու-Յորք Թայմս»-ի էջերում բազմաթիվ լրատվություններ կային տառապող հայերի օգտին կատարվող դրամական նվիրատվությունների, ինչպես նաև այդ գումարները Կ. Պոլիս՝ Հ. Մորգենթաուին փոխանցելու մասին: Այսպես, ըստ թերթի հոկտեմբերի 7-ի համարում առկա լրատվության, Ռոքֆելլեր ֆոնդը հայերի և սիրիացիների փրկության կոմիտեին էր նվիրաբերել 30 000 դոլար, իսկ հոկտեմբերի 8-ին արդեն հայտնվում էր, որ կոմիտեն Հ. Մորգենթաուին է փոխանցել 100 000 դոլար:[30]

«Նյու-Յորք Թայմս»-ը լրատվություններ էր տպագրում նաև տեղի ունեցած կոտորածները դատապարտող և հայերին սատարող հավաքների ու հայտարարությունների մասին: Հոկտեմբերի 18-ին թերթում հրապարակված լրատվության համաձայն, նախորդ օրը Նյու-Յորքի «Սենչրի Թիերլում» տեղի ունեցած ժողովը որոշել էր «ամերիկյան ժողովրդի անունից պաշտոնական բողոք հայտնել այս դաժանությունների և անմարդկային գործողությունների դեմ»: Ինչպես հայտնում է լրատվությունը՝ մասնակիցները ստորագրել էին գերմանական կայսերն ուղղված խնդրագիր:[31]

Նոյեմբերի 1-ին թերթի էջերից տեղեկանում ենք, որ հոկտեմբերի 30-ին հայկական կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեն հայտարարություն էր արել, որում նշվում էր, որ «թուրքերի կողմից հայերի ոչնչացմանը նպատակաուղղված պատերազմն այնքան սարսափելի է, որ երբ դրա մանրամասները հայտնի դառնան, աշխարհը կհասկանա, որ տեղի ունեցածը պատմության մեջ ամենամեծ, ամենից սրտաճմլիկ և բռնությամբ լի ոճրագործությունն է»:[32]

Նոյեմբերի 14-ին թերթում հրապարակվեց Անգլիական և արևելյան ուղղափառ եկեղեցիների միության (բաղկացած ինչպես ամերիկացիներից, այնպես էլ ռուս, հույն և ասորի ուղղափառ եկեղեցիների հետևորդներից) դիմումն ԱՄՆ-ի նախագահին՝ պահանջելով դիմել Գերմանիային, որպեսզի վերջինս ստիպի Թուրքիային՝ դադարեցնել հայերի նկատմամբ բռնաճնշումները: Նախագահից պահանջվում էր նաև փոխադրամիջոցներ տրամադրել՝ հայերին մոտակա քրիստոնյա երկրներ տեղափոխելու նպատակով:[33]

«Նյու-Յորք Թայմս»-ի էջերում գնալով ավելի հստակորեն էր խոսվում հայերի ծրագրված ոչնչացման մասին: Այդ փաստը, թերևս, վկայությունն է այն բանի, որ այդ ժամանակ, առավել քան առաջ, ամերիկյան հասարակայնությունը սկսել էր գիտակցել տեղի ունեցած ողբերգության ծավալը: Դեռ հոկտեմբերի 7-ին թերթը տեղեկացնում էր, որ համաձայն

Անգլիայի լորդերի պալատում վիկոնտ Բրայսի ներկայացրած տեղեկագրի՝ հայերի կորուստները մինչ այդ պահը կազմում էին 800000 մարդ:[34] Հոկտեմբերի 22-ին թերթը տեղեկացնում էր, որ ըստ հայկական «Մշակ» թերթի (որն էլ իր հերթին վկայակոչում էր Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի տվյալները) 850 000 հայ ոչնչացվել կամ ստրկացվել էին թուրքերի կողմից, իսկ 200 000-ը անցել էր Ռուսական կայսրության սահմանները:[35]

«Նյու-Յորք Թայմս»-ի 1915թ. դեկտեմբերի 15-ի համարում Հայկական կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեի նախագահ Սեմյուել Դաթընը հայտնում էր, որ «Թուրքիայում ընդամենը մեկ տարի առաջ ապրող երկու միլիոն հայերից մեկ միլիոնը սպանվել, երկրից փախել, մահմեդականացվել կամ մահացել են աքսորի ճանապարհին»:[36]

1916թ. փետրվարի 10-ին թերթը տեղեկացնում էր, որ համաձայն սենատոր Լոջի առաջարկի, սենատն այդ օրն ընդունել էր որոշում՝ դիմել երկրի նախագահ Վիլսոնին, որ վերջինս սահմանի հայերի օգտին նվիրատվություններ կատարելու օր:[37]

Թերթը նաև որոշակի տեղեկություններ է տալիս Հայոց եղեռնի նկատմամբ ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշման, ինչպես նաև այդ դիրքորոշման նկատմամբ ամերիկյան հասարակայնության, նրա առանձին գործիչների վերաբերմունքի մասին: Այսպես, 1915թ. հոկտեմբերի 8-ի համարում հրապարակվում է Լոնդոնից ուղարկված մի թղթակցություն, որում խստորեն դատապարտվում էին երիտթուրքական պարագլուխները, ինչպես նաև նրանց գերմանացի պաշտպանները:[38] Հաջորդ օրվա՝ հոկտեմբերի 10-ի թղթակցությունը պարունակում էր Բրայսի նամակը Ա. Վիլյամսին: Ինչպես երևում է նամակից, Բրայսի կարծիքով չեզոք երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի միջոցով պետք է ազդել Գերմանիայի վրա, որպեսզի այն ստիպի Թուրքիային դադարեցնելու կոտորածները:[39] Այնինչ «Նյու-Յորք Թայմս»-ում 1915թ. հոկտեմբերի 16-ին հրապարակված տեղեկատվության համաձայն, թուրքահայության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ Նյու Ջերսիի ներկայացուցիչ Ջոն Իգանի հարցապնդմանն ի պատասխան պետքարտուղարությունը հայտնել էր, որ բացի Հ. Մորգենթաուի միջոցով կատարվող ոչ պաշտոնական դիմումներից, ԱՄՆ-ն այլևս ոչինչ չի կարող անել:[40] ԱՄՆ-ի քաղաքականության լուսաբանման հարցում բավական խոսուն է այն փաստը, որ 1915թ. դեկտեմբերի 23-ին «Նյու-Յորք Թայմս»-ում հրապարակվեց օգոստոսի 9-ին թուրքական կառավարությանն ուղղված Գերմանիայի բողոքի նոտայի տեքստը, որը, ինչպես վերը նշվեց, Գերմանիայի դեսպանի միջոցով պետքարտուղարությանն էր փոխանցվել դեռ հոկտեմբերի 8-ին, այսինքն նոտան ամերիկյան հասարակությանը հայտնի դարձավ 2,5 ամիս ուշացումով:[41]

1915թ. հոկտեմբերի 23-ին թերթը տեղեկացնում էր, որ համաձայն գերմանական կառավարության կողմից պետքարտուղարությանն ուղղված հայտարարության, այն ի վիճակի չէ կանգնեցնելու Թուրքիային, քանի որ «չնայած իր կատարած պաշտոնական ջանքերին, վերջինս ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում այդ հարցում»:[42]

«Նյու-Յորք Թայմս»-ի 1916թ. փետրվարի 18-ի համարում տպագրվեց քսան տարի Պարսկաստանում միսիոներ եղած ամերիկացի Վիլյամ Շեղի նամակը պետքարտուղար Ռ. Լանսինգին, որում նա, մասնավորապես, նշում է. «վստահ եմ, որ կան շատ խելամիտ ամերիկացիներ, որոնք մեր կառավարության լռությունը վտանգավոր են համարում»: Ապա նամա-

կագիրն այն կարծիքն է արտահայտում, որ նման մեծածավալ հանցագործության նկատմամբ հասարակության լռությունը նշանակում է հրաժարվել մարդկությանը ծառայելուց և ավելին՝ այն վտանգի տակ է դնում ԱՄՆ-ի հեղինակությունը՝ զրկելով նրան մարդասիրության և ազատության խոսնակի իր իրավունքից:[43]

Հայոց ցեղասպանությանը, բացի «Նյու-Յորք Թայմս»-ից, անդրադարձել են նաև մի շարք այլ ամերիկյան թերթեր, ամսագրեր, հանդեսներ: Նրանցից շատերն ավելի համարձակ և անկաշկանդ գտնվեցին Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրենց գնահատականներում: Ի տարբերություն «Նյու-Յորք Թայմս»-ի, ուր տպագրվում էր անմիջական օպերատիվ լրատվությունը միայն, այս պարբերականներում հիմնականում տպագրվում էին հոդվածներ, առաջ էին քաշվում կարծիքներ, մեկնաբանություններ էին տրվում հայտնի փաստերին:

1915թ. հուլիսյան իր թողարկումում «Միշընարի ռիվյու օվ դը ուորլդ» (The Missionary Review of the World) ամսաթերթը տպագրել էր Պարսկաստանում միսիոներ Ռոբերտ Լաբերիի «Ջիհադը ներխուժում է Պարսկաստան» հոդվածը, ուր ականատես հոդվածագիրը նկարագրում էր կատարված խժդժությունները, մեկնաբանելով դրանք իբրև Թուրքիայի համիսլամական քաղաքականության անմիջական հետևանք:[44] Պետք է նկատել սակայն, որ այս պարբերականը ևս որոշակի ուշացումով՝ միայն օգոստոսի կեսերից արձագանքեց տեղի ունեցող ցեղասպանությանը: 1915թ. օգոստոսի 18-ին «Աութլուկ» (The Outlook) շաբաթաթերթում միանգամից տպագրվեց Հայոց ցեղասպանությանը վերաբերող երկու հոդված: Դրանցից մեկը վերաբերում էր Բուրսայում հայերի նկատմամբ կատարվող բռնություններին և Մորգենթաուի ջանքերին՝ համոզելու Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպաններին ներգործելու թուրքական իշխանությունների վրա, որպեսզի վերջիններս դադարեցնեն հայերի նկատմամբ բռնությունները: Մյուս հոդվածը վերաբերում էր Պարսկաստանում թուրքերի իրականացրած դաժանություններին և կոչ էր արվում թեթևացնել ողջ մնացած հայերի վիճակը:[45]

Այս պարբերականների համար ևս սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները եղան Հայոց ցեղասպանությանն անդրադարձող հոդվածներով առատ: 1915թ. սեպտեմբերի 27-ին «Ինդեպենդենտ» (The Independent) թերթում տպագրվեց «Հայաստանի ամայացումը» վերնագրով մի հոդված, որում այն միտքն էր արտահայտվում, որ տեղի է ունենում հայ ազգի սիստեմատիկ ոչնչացում և Թուրքիայի հայաթափում: Ամփոփելով, հոդվածագիրը հանգում է այն եզրակացության, որ ԱՄՆ-ն պետք է պաշտպանի հայերին՝ իր իսկ շահերից ելնելով:[46]

«Աութլուկ» (The Outlook) հանդեսը 1915թ. սեպտեմբերի 29-ի համարում ներկայացնում էր ամերիկյան միսիոներների, հյուպատոսների (հատկապես Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեքսոնի) վկայությունները Հայոց ցեղասպանության մասին, ընդ որում՝ առանց նշելու հեղինակների անունները: Այս հոդվածում ևս այն միտքն էր հայտնվում, որ իրականացված եղեռնագործությունը ծրագրված էր և անզուգ՝ իր կատարմամբ:[47]

ԱՄՆ-ի մամուլի այս հատվածի վերլուծական տեղեկատվության մեջ հետաքրքրական կարող են լինել հայերի մարդկային կորուստների թվի մասին կարծիքները: Այսպես, Հ. Մորգենթաուն, ըստ «Լիթերերի դայջեստ»-ի (The Literary Digest), 1915թ. մայիսից հոկտեմբեր ընկած ժամա-

նակահատվածում հաշվվում է 350 000 զոհ:[48] 1915-ի նոյեմբերին «Միշընը-
բի ռիվիու» ամսաթերթը մինչև այդ պահը Հայոց ցեղասպանության զոհերի
թիվը համարում է 800 000:[49]

«Աութլուկ»-ում 1916թ. դեկտեմբերի 20-ին տպագրված՝ թղթակից Վ.
Էլլինի հարցազրույցում, իր անձն անվտանգության նկատառումներով
անհայտ պահող մի ամերիկացի ասել է, որ իր և Թուրքիայում բնակվող այլ
ամերիկացիների կարծիքով տեղահանվածների միայն 10%-ն է «տեղ հաս-
նում», իսկ տեղահանվել է մոտ 1 միլիոն մարդ: Փաստորեն, ըստ թղթակցի
զրուցակցի, զոհված հայերի թիվը պետք է կազմեր 900 000 մարդ:[50]

«Մաքըրդեյ իվնինգ փոստ»-ի (The Saturday Evening Post) 1916թ.
փետրվարի 5-ի համարում Էլինա Իգանն իր հոդվածում նշում է, որ ընդհա-
նուր առմամբ մինչ այդ պահը մոտ 1,5 միլիոն մարդ է տեղահանվել:[51]

Մինչ 1916թ. ընթացքում «Նյու-Յորք Թայմս»-ի էջերում Հայոց ցեղա-
սպանությանը նվիրված հաղորդագրությունների թիվը գնալով պակասում
էր, ամերիկյան այլ պարբերականների ակտիվությունը բնավ չէր նվազում:
Հայոց ցեղասպանության մասին բազմաթիվ վկայությունների շարքում՝
ընդարձակ քաղվածքներ էին բերվում վիկոնտ Բրայսի «Կապույտ գրքից»,
հատկապես՝ «Նյու-Յորք Թայմս»-ի հավելված «Քարընթ հիսթրրի»
(Current History) ամսաթերթում (1916թ. նոյեմբեր), «Լիվինգ էյջ» (The
Living Age) հանդեսում (1916թ. փետրվարի 5): 1916թ. նոյեմբերին «Աթլեն-
թիք Մանթլի» (The Athlantic Monthly) ամսաթերթը հրապարակեց «Մի
ազգի սպանդը» վերտառությամբ հոդված, որում, վերլուծելով Հայոց ցեղա-
սպանության պատճառներն ու իրագործման մեխանիզմները, այն կար-
ծիքն էր առաջ քաշում, որ հայերի տեղահանումը՝ ռազմական անհրաժեշ-
տության պատրվակով, իրականում ոչնչացման նպատակ ուներ, և որ այն
դրույթը, թե հայերը ապստամբել են, կեղծ է: Իբրև հայերի ցեղասպանու-
թյան հնարավոր պատճառ հոդվածագիրը մատնանշում է մի կողմից՝ հայե-
րի բարձր մտավոր, տնտեսական և այլ ներուժը, որը նախանձ էր առա-
ջացնում այդ առումներով հայերին զիջող թուրքերի մոտ, իսկ մյուս կողմից՝
երիտթուրքերի որդեգրած «Թուրքիան միայն թուրքերի համար» շովինիս-
տական կարգախոսը: Հոդվածում նշվում էր նաև Թուրքիայում վերափո-
խումների անհնարինությունը՝ տիրապետող իսլամական գաղափարա-
խոսության պայմաններում, որից իթթիհատական պարագլուխները իրենք
մեծ մասամբ լինելով անտարբեր կրոնի նկատմամբ, վարպետորեն
օգտվեցին՝ գրգռելով մոլեռանդ խուժանը «անհավատների» դեմ: Ըստ հոդ-
վածագրի, կատարվածում մեղքի իր բաժինն ուներ նաև եվրոպական
դիվանագիտությունը՝ իր խարդավանքներով:[52]

Ամերիկյան մամուլի էջերում միանշանակ չէր մեկնաբանվում ԱՄՆ-ի
պաշտոնական դիրքորոշումը Օսմանյան կայսրությունում հայերի ցեղա-
սպանության խնդրի նկատմամբ: Օրինակ, 1915թ. սեպտեմբերի 29-ի
«Աութլուկ»-ի վերոհիշյալ հոդվածում ի թիվս այլ հարցերի նշվում է, որ
ԱՄՆ-ը Օսմանյան կայսրությունում բազմաթիվ կրթական, հոգևոր,
մշակութային հաստատություններ ունի, որոնք մեծ մասամբ գործ ունեն
այդ երկրում բնակվող հայերի հետ, և եզրակացնում, որ. «Ամերիկան այդ
պատճառով էլ պետք է առաջինը բողոքի ձայնը բարձրացնի և օգնի
տառապյալ հայ ազգին»:[53] 1916թ. հուլիսի 5-ին նույն պարբերականում
տպագրված Ջոն Օթիս Բարրոուզի «Թուրքիայի վերաբերմունքը հայերի
հանդեպ» վերնագրով հոդվածում հեղինակը խոր վրդովմունքով դատա-

պարտում է այդ ժամանակ ԱՄՆ-ի պաշտոնական որոշ շրջանակներում տեղ գտած այն կարծիքը, թե ԱՄՆ-ը հայերի համար արել է այն ամենը, ինչ կարելի էր անել և որ հայերի տեղահանությունները ինչ-որ տեղ կարելի էր հասկանալ կամ արդարացնել:[54] Իսկ ահա «Ինդեպենդենտ» թերթը 1915թ. հոկտեմբերի 18-ի «Ամենամեծ կրոնական ջարդերը» վերտառությամբ հոդվածում իբրև կատարվածի պատասխանատու մատնանշում է Գերմանիային, միաժամանակ ընդգծելով, որ. «ԱՄՆ-ը, դաշնակիցները, չեզոք երկրներն անզոր են, միայն Գերմանիան կարող է ինչ-որ բան անել»:[55] Հետագա՝ 1917 և հատկապես 1918թթ. հոդվածներում հակագերմանական ուղղվածությունը բավական նկատելի է, ինչը, բացի այն օբյեկտիվ ճշմարտությունից, որ Գերմանիան իսկապես որոշակի պատասխանատվություն էր կրում Հայոց ցեղասպանության համար, կարելի է բացատրել նաև ԱՄՆ-ի՝ աստիճանաբար դեպի Անտանտը հակվելու հանգամանքով:

Այսպիսով, փաստելով, որ 1915-1917թթ. ամերիկյան մամուլն արժեքավոր է Հայոց ցեղասանության վավերագրման տեսանկյունից, հարկ ենք համարութում նշել, որ.

ա) Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ի մամուլը Հայոց ցեղասանությունը լուսաբանել է ընդգծված չեզոք դիրքերից, բացառությամբ հայանպաստ մի շարք հոդվածներից, որոնց հեղինակները, մեծավ մասամբ, հայերը կամ ամերիկյան միսիոներներն էին:

բ) ԱՄՆ-ի մամուլը զգալի ուշացումով է արձագանքել 1915թ. Հայոց ցեղասպանությանը և միայն նույն տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ կոտորածները առավել մեծ թափ ստացան, սկսեց ավելի լայնորեն լուսաբանել այն: Ամերիկյան մամուլ նյութերի ուշ հասնելու պատճառներից մեկը, մեր կարծիքով, պետք է համարել ԱՄՆ-ի պաշտոնական չեզոքության և «Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու» քաղաքականությունից բխող պետքարտուղարության միտումը՝ չհրապարակել Հայոց ցեղասպանության մասին աղաղակող փաստերը, որոնք կարող էին հակաթուրքական տրամադրություններ առաջացնել ԱՄՆ-ում:

գ) Ամերիկյան մամուլի էջերն օգտագործվել են նաև ԱՄՆ-ում այդ ժամանակ գտնվող թուրք և գերմանացի դիվանագետների կամ անհատ անձանց կողմից՝ հայերի դեմ իրականացված եղեռնագործություններն արդարացնելու և հակահայկական քարոզարշավ ծավալելու նպատակով:

Ամերիկյան մամուլի խորքային վերլուծությունը կարող է բացահայտել առավել հետաքրքրական փաստեր, որոնք, հնարավոր է, վրիպած լինեն Ռ. Քլոյանի՝ ամերիկյան մամուլի լայնածավալ ուսումնասիրողի ուշադրությունից: Կարծում ենք, այս ուղղությամբ կատարվելիք հետագա ուսումնասիրություններն առատ նյութ կտրամադրեն Հայոց ցեղասպանության հետազոտողներին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Richard D. Kloian. "The Armenian Genocide: News Accounts from the American Press (1915-1922)", Berkeley, 1985:
[2] Նույն տեղում, էջ 2:
[3] Նույն տեղում, էջ 3:
[4] Նույն տեղում, էջ 4, 7.

[5] Papers Relating to the Foreign Relations of the United States. 1915, Supplement, the World War, Washington, 1928, file no 867.4016/58.
[6] Richard D. Kloian. նշվ. աշխ., էջ 14:
[7] Նույն տեղում, էջ 23:
[8] Papers Relating to the Foreign Relations of the United States. 1915, Supplement, the World War, Washington, 1928, file no 867.4016/74.
[9] Նույն տեղում, file no 867.4016/74.
[10] Նույն տեղում, file no 367.116/341.
[11] Նույն տեղում, file no 367.116/341.
[12] Richard D. Kloian. նշվ. աշխ., էջ 30, 31:
[13] Նույն տեղում, էջ 36:
[14] Revue du monde arménien moderne et contemporaine, tome 1, Paris, 1994. Sarafian A. " The Paper Trail, the American State Department and the Report of Committee on Armenian Atrocities", p. 127.
[15] Richard D. Kloian. նշվ. աշխ., էջ 17:
[16] Նույն տեղում, էջ 42:
[17] Նույն տեղում, էջ 47-48:
[18] Նույն տեղում, էջ 47:
[19] Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915, Supplement, the World War, Washington, 1928, file no 867.4016/173.
[20] Richard D. Kloian. նշվ. աշխ., էջ 63:
[21] Նույն տեղում, էջ 72:
[22] Նույն տեղում, էջ 74-75:
[23] Նույն տեղում, էջ 78-79:
[24] Նույն տեղում, էջ 84:
[25] Նույն տեղում, էջ 87:
[26] Նույն տեղում, էջ 88:
[27] Նույն տեղում, էջ 48:
[28] Lowry H. "The Story Behind the Ambassador Morgenthau's Story" , Ankara, 1990.
[29] Richard D. Kloian. նշվ. աշխ.- էջ 56, Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915, Supplement, the World War, Washington, 1928, file no 867.4016/218a.
[30] Richard D. Kloian. նշվ. աշխ., էջ 62:
[31] Նույն տեղում, էջ 82-83:
[32] Նույն տեղում, էջ 106:
[33] Նույն տեղում, էջ 108:
[34] Նույն տեղում, էջ 61:
[35] Նույն տեղում, էջ 86:
[36] Նույն տեղում, էջ 124:
[37] Նույն տեղում, էջ 140:
[38] Նույն տեղում, էջ 63:
[39] Նույն տեղում, էջ 66-67:
[40] Նույն տեղում, էջ 75:
[41] Նույն տեղում, էջ 126:
[42] Նույն տեղում, էջ 88:
[43] Նույն տեղում, էջ 140:
[44] Նույն տեղում, էջ 17:
[45] Նույն տեղում, էջ 25-26:
[46] Նույն տեղում, էջ 40:
[47] Նույն տեղում, էջ 43-46:
[48] Նույն տեղում, էջ 51-52:
[49] Նույն տեղում, էջ 93-105:
[50] Նույն տեղում, էջ 199-201:

[51] Նույն տեղում, էջ 130-133:
[52] Նույն տեղում, էջ 190-193:
[53] Նույն տեղում, էջ 43-46:
[54] Նույն տեղում, էջ 151:
[55] Նույն տեղում, էջ 80:

Резюме

Освещение Геноцида армян в прессе США (1915-1917гг.).

Закарян Тигран

Исследование публикаций о Геноциде армян в прессе США (1915-1917гг.) позволяют объяснить отношение правительства и общественного мнения США к Геноциду армян. Американская пресса использовала различные источники освещения Геноцида армян. Сопоставление различных статей по данной теме позволяет более объективно и обстоятельно дать общую картину направленности этих публикаций. В целом отношение прессы США к Геноциду армян было нейтральным.

Статья просматривает материалы американской прессы в хронологическом порядке, с определенной переодизацией.

Summary

The United States Press Coverage of the Armenian Genocide (1915-1917)

Zakaryan Tigran

The research on the US press coverage of the Armenian Genocide enables to make clear the attitude of the US government and the public opinion on the Armenian Genocide. The American press made use of different sources for covering the Armenian Genocide events in 1915. This makes it a frustworthy and valuable record of the Armenian Genocide. The article reviews materials of the American press in chronological order, paying special attention to outstanding dates and periods. On the whole the US press attitude on the Armenian Genocide was neutral.